ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺՆԵՎՈՒՄ

Սույն թվականի հունիսի 4-ից 8-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) կենտրոնական գրասենյակում, կայացավ Էկումենիկ ծառայողների (Ecumenical Officer's meeting) հանդիպումը[1], որին մասնակցում էին շուրջ երկու տասնյակ Էկումենիկ պաշտոնյաներ տարբեր Եկեղեցիներից և Էկումենիկ կազմակերպություններից:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ այդ հանդիպմանը Ս. Էջմիածինը ներկայացնում էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը: Նույն հանդիպմանը Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսությունը ներկայացնում էր Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը:

Ասենք, որ Միջեկեղեցական շրջանակներում էկումենիկ պաշտոնյաները կամ ծառայողները Եկեղեցիների ու Էկումենիկ կազմակերպությունների այն ներկայացուցիչներն են, ովքեր կապող օղակ են իրենց ներկայացրած Եկեղեցիների կամ կազմակերպությունների ու ԵՀԽ-ի միջև: Նրանք կոչված են իրենց մտածումները և իրենց ներկայացրած Եկեղեցիների տեսակետները, հայացքները, դրական և քննադատական կարծիքներն արտահայտելու Էկումենիկ շրջանակներում, ԵՀԽ-ում և ԵՀԽ-ին հարող կազմակերպություններում, ինչպես նաև օգնելու և համապատասխան տեղեկատվությամբ ապահովելու իրենց Եկեղեցիների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին միջեկեղեցական հանդիպումների ընթացքում:

Հարկ է նաև ավելացնել, որ չնայած նրանք պաշտոնապես ներկայացված են իրենց Եկեղեցիների կողմից, սակայն ԵՀԽ-ի շրջանակներում տեղի ունեցող հանդիպումների ըն-

---

[1] Վերջին տարիների ընթացքում սա երկրորդ հանդիպումն էր: Առաջինը տեղի էր ունեցել 2001 թ. Բուխարեստում: Այդ հանդիպմանը Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Հոգեշնորհ Տ. Ավետիս արեղա Սահակյանը:

թացքում նրանց կողմից կայացված որոշումները պաշտոնական չեն կարող դիտվել, այլ համարվում են հավելյալ խորհրդատվություն հետագա գործունեության համար:

Հանդիպման բացումից, միմյանց հետ ծանոթանալուց հետո, ժողովականների հետ հանդիպեց և ԵՀԽ գործունեության մասին բանախոսությամբ հանդես եկավ ԵՀԽ գլխավոր քարտուղար դոկտոր Սամուել Կոբիան: Նույն օրը, երեկոյան, ԵՀԽ պաշտոնական ներկայացուցիչները ժողովականների հետ քննարկման միջոցով տեսակետներ փոխանակեցին «Բռնությունը հաղթահարելու տասնամյակ» (Decade to Overcome Violence) թեմայի շուրջ:

Շաբաթ օրվանից՝ հունիսի 5-ից հիմնականում քննարկվեցին ԵՀԽ-ին և Էկումենիկ շարժման վերակազմավորման հեռանկարներին առնչվող թեմաներ, ԵՀԽ առաջիկա ծրագրերն ու ներքին կազմակերպչական խնդիրները, ԵՀԽ դրամական միջոցներին առնչվող խնդիրներ, 9-րդ գլխավոր ասամբլեային վերաբերվող հարցեր, ինչպես նաև Էկումենիկ ծառայողների դերն ու առաքելությունը էկումենիկ շարժման մեջ՝ ԵՀԽ-ի և այնդամ Եկեղեցիների ու կազմակերպությունների շրջանակներում: Սույն հարցերը մեծամասամբ նախապես քննարկվել են Անթիլիասում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հրավերով կայացած հանդիպման ընթացքում: 2003 թվականի նոյեմբերի 17-21-ը Անթիլիասում տեղի ունեցած այս հանդիպման նյութերը ԵՀԽ-ի կողմից հրատարակվել է առանձին գրքույկով[2]: Կիրակի օրը, երեկոյան, տեղի ունեցած հանդիպման ընթացքում խոսվեց Իսլամի հետ հարաբերությունների մասին:

Հավարտ հանդիպման ժողովականները որոշեցին մշտապես կապի մեջ լինել միմյանց հետ, իսկ ԵՀԽ պաշտոնյաները, գրանցելով ժողովականների կարծիքները վերոնշյալ խնդիրների շուրջ, հաշվի են առնելու դրանք իրենց հետագա գործունեության ընթացքում: Հանդիպման ավարտին որոշվեց նաև հաջորդ հանդիպումը կազմակերպել 2005 թվականի գարնանը, ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի հանդիպումից անմիջապես հետո, Ժնևից ոչ հեռու գտնվող Բոսսեի Էկումենիկ դպրոցում:

Երկու տարի հետո տեղի է ունենալու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի իններորդ գլխավոր ասամբլեան, և ժողովականներն անհրաժեշտ համարեցին ծանոթանալու նաև ասամբլեայի նախնական ծրագրին, որը որոշ փոփոխություններից հետո պետք է առաքվի անդամ Եկեղեցիների ու կազմակերպությունների էկումենիկ պաշտոնյաներին:

ԵՀԽ-ն և ընդհանրապես էկումենիկ շարժումը, արդի զարգացող աշխարհի մարտահրավերներին դեմ հանդիման, կանգնած է ճգնաժամային իրավիճակի առջև: Էկումենիկ շրջանակներում լուրջ քննարկման նյութ է հանդիսանում ԵՀԽ-ի և շարժման վերակազմավորման հարցը: Գործուն աշխատանք է տարվում շարժման մեջ ընդգրկելու Հռոմեականաթոլիկ

---

[2] Consultation on Reconfiguration of the Ecumenical Movement Convened by the WCC Antelias, Lebanon, 17-21 November 2003.

Եկեղեցուն և նոր կրոնական շարժումների ներկայացուցիչներին՝ սկզբունք ունենալով, որ վերջիններս պետք է ընդունեն Նիկիական Հանգանակը[3]: Լուրջ աշխատանքներ են տարվում ավելի մեծացնելու Էկումենիկ շարժմանը մասնակից Եկեղեցիների դերը: Այս խնդիրների շուրջ հրատարակված է հսկայական գրականություն: Տակավին կարիք կա, որ ամբողջ գրականությունը վերլուծվի և համապատասխան գնահատական տրվի՝ արտահայտելով Հայ Եկեղեցու կարծիքը տվյալ հարցերի շուրջ:

ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Մայր Աթոռի Միջեկեղեցական
հարաբերությունների բաժին

---

3 Հոգեգալստականներին, ինչպես նաև ԵՀԽ-ի ոչ անդամ բողոքականներին (հիմնականում աղանդավորներ՝ ադվենտիստ, բապտիստ և այլն) ընդգրկելու ուղղությամբ ԵՀԽ–ն փորձեր է կատարում հրավիրելով Ընդհանուր Քրիստոնեական Ֆորումներ: Նման հանդիպումներ տեղի են ունեցել 2002 թ. հունիսին Փասադենայում (ԱՄՆ) և 2004 Հոնկ Կոնգում, իսկ առաջին հանդիպումը վերոնշյալ երկուսից առաջ տեղի է ունեցել Շվեյցարիայում: Ֆորումի գաղափարը հղացվել է Զիմբաբվեում կայացած ԵՀԽ 8-րդ Ասամբլեայի ժամանակ: